Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
դեկտեմբերի 24 -ի N 952 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԱՊԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆ»

1.	Ծրագրի անմիջական նպատակը	ՀՀ ոստիկանության, ԱՍՀՆ, բարձր սոցիալական ռիսկի խմբի երեխաներին առնչվող կառույցների կողմից ուղղորդվող, «Թեժ գիծ» ծառայության ահազանգերի կամ ծնողների, խնամակալների դիմումների, ինչպես նաև անձամբ դիմելու պարագայում բռնության ենթարկված, անապաստան, լքված, կրթությունից և այլ հանրային ծառայություններից դուրս մնացած, ինչպես նաև այլ տրավմատիկ տարաբնույթ իրադարձությունների և ընտանեկան հանգամանքների պատճառով վարքային և հոգեհուզական խնդիրներ ունեցող երեխաների համար «ճգնաժամի միջամտության» ծառայությունների մատուցում: ճգնաժամի միջամտությունն իրականացվում է երեք ճանապարհով՝ 1) <u>ներկենտրոնային</u>՝ Երեխաների աջակցության կենտրոնում այդ երեխաների ժամանակավոր ապաստանում, խնդիրների հնարավոր կարգավորում՝ ինտենսիվ բազմամասնագիտական աջակցության միջոցով, ինչը թույլ կտա երեխային անվտանգ ձևով վերամիավորել ընտանիքի հետ կամ, դրա անհնարինության դեպքում, տեղավորել խնամքի այլընտրանքային տարբերակներում՝ ընտանեկան տիպերի նախընտրելիության սկզբունքով: Ծրագիրը գործում է հանրապետության ամբողջ տարածքի, ինչպես նաև Արցախի երեխաների համար: Ծրագիրը ՀՀ ոստիկանության աջակցությամբ օգնում է նաև արտերկրում ժամանակավորապես բնակվող ՀՀ քաղաքացիների՝ նշված իրավիճակներում հայտնվելու հիմքով միջպետական համաձայնագրերի շրջանակներում

		Հայաստան տեղափոխվող երեխաներին, ինչպես նաև հայազգի կամ օտարազգի՝ առանց ուղեկցման կամ ուղեկցողից առանձնացված և Հայաստան տեղահանված երեխաներին. 2) ճգնաժամի միջամտություն առանց ապաստանման՝ այն երեխաների համար, ովքեր տուժել են մեկանգամյա կամ բազմակի տրավմաներից, սակայն ունեն ընտանեկան կայուն կապեր, կամ այն երեխաների համար, ովքեր կամ իրենք, կամ իրենց ծնողները համաձայն չեն, որ երեխաներն ապաստանվեն Երեխաների աջակցության կենտրոնում, սակայն կարիք ունեն ծառայություններ ստանալու. 3) արտակենտրոնային (մոբիլ ծառայություններ)՝ ստացված ահազանգերի առնչությամբ սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրում դժվար իրավիճակում հայտնված երեխաներին՝ անմիջապես նրանց ընտանիքում և կոնկրետ համայնքում: Արտակենտրոնային ծառայությունները մատուցվում են հետևյալ ծրագրերի շրջանակներում՝ «Գործենք միասին՝ հանուն Ծաղկահովտի համայնքում մանկական աղքատության նվազեցման»՝ ՀՀ Արագածոտնի մարզում, «Ընտանեկան միջավայր և համայնքահեն ծառայություններ Հայաստանի երեխաների համար»՝ ՀՀ Շիրակի, Կոտայքի, Սյունիքի, Արմավիրի, Արարատի մարզերում, «Աջակցություն տեղահանված երեխաներին»՝ ՀՀ Արարատի, Կոտայքի մարզերում և Երևանում, «Աղքատության հաղթահարումը ՀՀ Տավուշի մարզում»՝ ՀՀ Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	«Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի բարեգործական ծրագրի շրջանակներում նախատեսվող մասնագիտական ծառայությունների մատուցման, սննդամթերքի, հագուստի, գրենական պիտույքների, սանիտարատեխնիկական պարագաների գնման, ընթացիկ վերանորոգման, ինչպես նաև էլեկտրաէներգիայի, գազի, ջրի, կապի ծառայությունների համար ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում:
3.	Բարեգործը	Ամերիկայի Հայ օգնության ֆոնդ, Նյու Յորքի գրասենյակ
4.	Ծրագրի կատարողը	«Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամ, հասցեն՝ քաղ. Երևան, Կարապետ Ուլնեցու փող., թիվ 64, ՀՎՀՀ՝ 01009295
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Իրականացման վայրը՝ քաղ. Երևան և ՀՀ բոլոր մարզերը, Արցախ Բնագավառը՝ սոցիալական՝ բազմաբնույթ հոգեբանական, առողջապահական և սոցիալ-մանկավարժական աջակցության տրամադրում

6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 127312376 դրամ: Միջոցներն ստացվելու են ԱՄՆ-ի ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակից:
7.	Բարեգործություն ստացողը	Բարձր սոցիալական ռիսկի ներքո գտնող՝ անապաստան, խնամազուրկ, լքված, բռնությունների զոհ, կրթությունից դուրս մնացած, օրենքի հետ հակասության մեջ գտնվող, վարքային խնդիրներ ունեցող երեխաները և նրանց ընտանիքները, որոնք արագ միջամտության և աջակցության կարիք ունեն և կենտրոն են ուղղորդվում ՀՀ ոստիկանության անչափահասների բաժանմունքի (գործող պայմանագրի համաձայն), լիազորված նախարարության՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ուղեգրող նամակով, ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության մարզային բաժինների, դեպք վարողների, համայնքային սոցիալական աշխատողների ահազանգով, պետական կառույցների, հասարակական կազմակերպությունների, ծնողների կողմից, ինչպես նաև իրենց՝ երեխաների ահազանգով: Շահառուների թիվը. Ներկենտրոնային ծառայությունների շրջանակներում կպաասարկվի շուրջ 300 երեխա և առնվազն 500 ծնող/խնամող կամ խնամողի փոխարինող: Արտակենտրոնային ծառայությունների շրջանակներում ծառայությունից կօգտվի շուրջ 1500 երեխա և ավելի քան 1000 ծնող/խնամող: Կենտրոնի ծրագրերում ընդգրկված երեխաները/ընտանիքները կստանան իրենց կարիքներին համապատասխան՝ ԵԱԿՀ-ի կողմից տրամադրվող բոլոր ծառայությունները: Ակնկալվում է, որ տարվա ընթացքում ծառայություններ կստանա մինչև 3300 շահառու:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը և (կամ սկիզբը, ավարտը)	01.01.2020 թ. - 31.12.2020 թ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Արագ միջամտության և աջակցության կարիք ունեցող երեխաների սոցիալական, հոգեբանական, բժշկական, սոցիալ-մանկավարժական և այլ մասնագիտական աջակցության, խնամքի և օգնության կազմակերպում՝ ապաստանման, թեժ գծի, արտակենտրոնային, խնամատարության ծառայությունների միջոցով: Այդ երեխաներից՝ առավել բարձր ռիսկի ներքո և կյանքի ու զարգացման համար վտանգավոր պայմաններում գտնվողները ժամանակավորապես ապաստանում են կենտրոնում և ստանում 7/24 հոգածություն, խնամք, պաշտպանություն, սոցիալ-հոգեբանական, առողջապահական, իրավական ծառայություններ, իսկ բարձր ռիսկի ներքո, սակայն պաշտպանության այլ՝ ընտանեկան կամ համայնքային մեխանիզմներ ունեցող երեխաներն աջակցություն են ստանում անմիջապես իրենց համայնքում և ընտանիքում:

		Աջակցությունը ներառում է աշխատանք երեք մակարդակներում՝ անհատականացված աշխատանք երեխայի հետ, ընտանեկան թերապիա՝ ընտանիքի անդամների հետ, համայնքային աշխատանք՝ սոցիալական միջավայրի հետ: Հոլիստիկ մոտեցմամբ այս աշխատանքը ներառում է երեխայի/ընտանիքի իրավիճակի բազմամասնագիտական գնահատումը, անհատական աշխատանքի պլանի ստեղծումը, միջամտության պլանի ստեղծումը և իրագործումը, մոնիթորինգը և վերանայումներ՝ ըստ անհրաժեշտության: Ծառայությունները մատուցվելու են երկու մոտեցմամբ՝ անմիջապես կենտրոնում՝ 24-ժամյա ապաստանման և արտագնա՝ անմիջապես երեխայի ընտանիքում: Ներկենտրոնային ծրագրի շահառու երեխաներն ստանում են ծառայությունների ամբողջ փաթեթը՝ խնամք (հիգիենա, սնունդ), սոցիալ-հոգեբանական աջակցություն, առողջապահական (տեղում կամ ստացիոնար բուժհաստատությունում), կրթական, մշակութային, մասնագիտական կողմնորոշմանն աջակցություն, թերապևտիկ ծառայություններ՝ հաղթահարելու բռնարարքների, լքումների և այլ վնասող վերաբերմունքի պատճառով առաջ եկած տրավմաները երեխաների շրջանում: Ճգնաժամային միջամտության շրջանակներում ծառայությունների մատուցումը տևում է միջինը մեկ ամիս, անհրաժեշտության դեպքում՝ խնդրի յուրահատկություններից և երե-խայի/ընտանիքի կարիքներից ելնելով, մինչև 6 ամիս և ավելի: Արտակենտրոնային ծառայությունների միջոցով երեխան/ընտանիքն սպասարկվում են տեղում, իրենց ընտանիքում և համայնքում, մասնագետներն այցելում են երեխայի ընտանիքին: Այս դեպքում երեխան ստանում է իր կարիքներին համապատասխան՝ բոլոր հիշատակված ծառայությունները, բացի ապաստանումից և խնամքի ծառայություններից: Մասնագետները տեղում համախմբում են այն բոլոր կառույցներն ու ծառայությունները, որոնք առնչվում են տվյալ ընտանիքին, կազմակերպում դեպքերի քննարկումներ՝ օգնելու համար երեխային/ընտանիքին՝ հաղթահարելու ստեղծված ռիսկային իրավիճակը: Սոցիալ-հոգեբանական խորհրդատվություն ստանալու համար երեխաները/ծնողները 3-6 ամիս տևողությամբ կապ են պահպանում կենտրոնի հետ՝ հեռախոսային կամ թերապևտիկ ու տեղեկատվական հանդիպումների միջոցով: Երեխաները կենտրոն են ուղղորդվում Հայաստանի Հանրապետության բոլոր բնակավայրերից՝ առանց տարածքային սահմանափակումների: Ծախսերը ներառում են երեխաների խնամքի, հիգիենայի, սննդի, հագուստի, առողջապահական, կրթական, օրվա զբաղվածության կազմակերպման, արտակենտրոնային մշակութային և արտադասարանային միջոցառումների կազմակերպման, շենքի պահպանության,

		կոմունալ-կենցաղային և այլ տնտեսական, ինչպես նաև խնամող, մասնագիտական, ադմինիստրատիվ և սպասարկող անձնակազմի աշխատավարձերն ու սահմանված հարկերը: Ծրագրի ընդհանուր արժեքը 2020 թ. համար կազմելու է 127312376 դրամ, որն ըստ եռամսյակների բաշխվելու է հետևյալ կերպ. առաջին եռամսյակ՝ 31828094 դրամ, երկրորդ եռամսյակ՝ 31828094 դրամ, երրորդ եռամսյակ՝ 31828094 դրամ և չորրորդ եռամսյակ՝ 31828094 դրամ: Գումարը բաշխվելու է ըստ հետևյալ ծառայությունների և աշխատանքների՝ **ա. սնունդ՝ 9000000 դրամ** **բ. բժշկական սպասարկում/դեղորայքի և հագուստի ձեռքբերում՝ 2000000 դրամ** **գ. կոմունալ ծառայություններ՝ 8870376 դրամ** **դ. հաշվապահական և աուդիտորական ծառայություն՝ 5456000 դրամ** **ե. շահառուների սպասարկմանն անհրաժեշտ տրանսպորտային ծառայություն՝ 4000000 դրամ** **զ. գրասենյակային պիտույքներ՝ 1000000 դրամ** **է. շահառուների հետ իրականացվող խնամքի և սոցիալ-հոգեբանական աշխատանքներ (մասնագետների աշխատավարձ)՝ 79200000 դրամ** **ը. վարչական աշխատակազմի ծախսեր՝ 11740000 դրամ** **թ. մասնագիտական աշխատակազմի վերապատրաստման ծախսեր՝ 3670000 դրամ** **ժ. կապի ծառայություն՝ 876000 դրամ** **ժա. շենքի պահպանման/սպասարկման ծախսեր՝ 1500000 դրամ** Բոլոր նշված ծախսերը կատարվելու են «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի շահառու երեխաների համար:

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ծառայություն-ների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	- **Վերապատրաստման ծառայությունների ձեռքբերում՝ 3670000 դրամ** - **Սնունդ՝ 9000000 դրամ** - **Բժշկական սպասարկում/դեղորայքի և հագուստի ձեռքբերում՝ 2000000 դրամ** - **Կոմունալ ծառայություններ՝ 8870376 դրամ** - **Հաշվապահական և աուդիտորական ծառայություն՝ 5456000 դրամ** - **Տրանսպորտային ծառայություն՝ 4000000 դրամ** - **Գրասենյակային պիտույքներ՝ 1000000 դրամ** - **Կապի ծառայություն՝ 876000 դրամ** - **Շենքի պահպանման/սպասարկման ծառայություններ՝ 1500000 դրամ** Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում՝ 01.01.2020 թ. - 31.12.2020 թ. ընթացքում՝ 3500000 դրամի չափով էլեկտրաէներգիայի ձեռքբերման համար. **«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ** «Հյուսիս» մասնաճյուղ, քաղ. Երևան, Քոչարի 13ա, ՀՎՀՀ՝ 01520882, պայմանագիր N 222226՝ կնքված 06.08.2008 թ. համաձայնագիր առ 26.08.2015 թ. Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում՝ 01.01.2020 թ. - 31.12.2020 թ. ընթացքում՝ 4000000 դրամի չափով՝ գազի ձեռքբերման համար. **«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ**, քաղ. Երևան, Չարենցի 141ա, ՀՎՀՀ՝ 00046317, 07.07.2013 թ. կնքված պայմանագիր N 013.08.13.0948 Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում՝ 01.01.2020 թ. - 31.12.2020 թ. ընթացքում՝ 170376 դրամի չափով՝ գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման համար. **«Էյ-Ի-Ջի-Սերվիս»**, քաղ. Երևան, Աղոնցի 10, ՀՎՀՀ՝ 00930884, 09.04.2010 թ., պայմանագիր N Ե-1118, համաձայնագիր N 9/Ե-1118, առ 05.11.2019 թ. Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում՝ 01.01.2020 թ. - 31.12.2020 թ. ընթացքում՝ 1200000 դրամի չափով՝ ջրամատակարարման համար. **«Վեոլիա ջուր» ՓԲԸ** քաղ. Երևան, Աբովյան 66ա, ՀՎՀՀ՝ 02655115, երկկողմ պայմանագիր՝ կնքված 02.11.2017 թ.

		Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում՝ 01.01.2020 թ. - 31.12.2020 թ. ընթացքում՝ 96000 դրամի չափով՝ հեռախոսակապի համար. **«Վեոն Արմենիա» ՓԲԸ,** քաղ. Երևան, Ահարոնյան 2, ՀՎՀՀ՝ 02500052, երկկողմանի պայմանագիր N 114371430, կնքված՝ 12.06.2009 թ. Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում՝ 01.01.2020 թ. - 31.12.2020 թ. ընթացքում՝ 700000 դրամի չափով՝ էլեկտրոնային հաղորդակցության ծառայության համար. **«Յուրոմ» ՍՊԸ**, քաղ. Երևան, Սայաթ-Նովայի 40/1, ՀՎՀՀ՝ 00024873, պայմանագիր N 023/27/112012՝ կնքված 27.11.2012 թ., կից N 1 հավելվածի համաձայնագիր՝ առ 19.05.2016 թ. Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում՝ 01.01.2020 թ. - 31.12.2020 թ. ընթացքում՝ 80000 դրամի չափով՝ կապի ծառայության համար. **«Յուրոմ» ՍՊԸ,** քաղ. Երևան, Սայաթ-Նովայի 40/1, ՀՎՀՀ՝ 00024873, բաժանորդային պայմանագիր No 3425591՝ կնքված 10.10.2016 թ. Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում՝ 01.01.2020 թ. - 31.12.2020 թ. ընթացքում՝ 1500000 դրամի չափով՝ սննդի ձեռքբերման համար. **«Թամարա» ՍՊԸ,** ՀՀ Կոտայքի մարզ, քաղ. Աբովյան,ՀՎՀՀ՝ 03500525, պայմանագիր՝ կնքված 29.11.2016 թ. Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում՝ 01.01.2020 թ. - 31.12.2020 թ. ընթացքում՝ 1000000 դրամի չափով՝ սննդի ձեռքբերման համար. **«Դավիթ 84» ՓԲԸ**, քաղ. Երևան, Դրոյի 22/1, ՀՎՀՀ՝ 00833046, պայմանագիր՝ կնքված 26.11.2014 թ., համաձայնագիր՝ առ 27.11.2018 թ. Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում՝ 01.01.2020 թ. - 31.12.2020 թ. ընթացքում՝ 1500000 դրամի չափով՝ սննդի ձեռքբերման համար.**«Գրանդ Քենդի» ՍՊԸ**, քաղ. Երևան, Մասիսի 31, ՀՎՀՀ՝ 02226764, պայմանագիր՝ կնքված 22.04.2016 թ. Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում՝ 01.01.2020 թ. - 31.12.2020 թ. ընթացքում՝ 400000 դրամի չափով՝ սննդի ձեռքբերման համար. **«Սիթի» ՍՊԸ,** քաղ. Երևան, Օհանովի փող. 15/1, ՀՎՀՀ՝ 01282006, պայմանագիր՝ կնքված 04.11.2018 թ.

		Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում՝ 01.01.2020 թ. - 31.12.2020 թ. ընթացքում՝ 240000 դրամի չափով՝ մաքուր ջրի ձեռքբերման համար. **«Էվրի դեյ» ՓԲԸ**, քաղ. Երևան, Դավիթ Բեկի 54/5, ՀՎՀՀ՝ 09104669, պայմանագիր թիվ J 494-19՝ կնքված 26.06.2019 թ., համաձայնագիր՝ կնքված 08.10.2019 թ. **Մնացած ձեռքբերում այլ կազմակերպություններից՝ 4360000** Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում՝ 01.01.2020 թ. - 31.12.2020 թ. ընթացքում՝ 4896000 դրամի չափով՝ հաշվապահական ծառայությունների համար.**«ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ**, քաղ. Երևան, Հյուսիսային պողոտա 1, թիվ 17, ՀՎՀՀ՝ 02588296, հաշվապահական հաշվառման ծառայությունների մատուցման N FAAS/05/16 նամակ-համաձայնագիր՝ կնքված 01.05.2016 թ., նամակ-համաձայնագրի N 4 հավելված՝ առ 19.11.2019 թ. Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում՝ 01.01.2020 թ. - 31.12.2020 թ. ընթացքում՝ 560000 դրամի չափով՝ կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար. **«Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ**, քաղ. Երևան, Նուբարաշեն, 10-րդ փող., տուն 6, ՏԳՀ՝ քաղ. Երևան, Մյասնիկյան պող. 5/1, ՀՎՀՀ՝ 00433357, աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագիր N 36՝ առ 16.10.2019 թ. Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում՝ 01.01.2020 թ. - 31.12.2020 թ. ընթացքում՝ 500000 դրամի չափով՝ գրասենյակային պարագաների համար. **«ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ**, քաղ. Երևան, Հանրապետության 62/133, ՀՎՀՀ՝ 00861057, պայմանագիր՝ կնքված 10.10.2013 թ., կից համաձայնագիր՝ առ 27.11.2018 թ. Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում՝ 01.01.2020 թ. - 31.12.2020 թ. ընթացքում՝ 500000 դրամի չափով՝ գրասենյակային պարագաների համար. **«ԴՈՔՍ ՔՈՄՊՅՈՒՏՐ» ՍՊԸ**, քաղ. Երևան, Պռոշյան 11/5, ՀՎՀՀ՝ 04718853, պայմանագիր՝ կնքված 02.11.2015 թ., համաձայնագիր՝ կնքված 19.11.2018 թ.

		Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում՝ 01.01.2020 թ. - 31.12.2020 թ. ընթացքում՝ 2000000 դրամի չափով՝ հագուստի և կենցաղային/շենքի պահպանման/ պարագաների ձեռքբերման համար. **«ԼԱՏՏԵ» ՍՊԸ**, հասցեն՝ քաղ. Երևան, Հաղթանակ թաղ., 68/5, ՀՎՀՀ՝ 01257241, պայմանագիր՝ կնքված 06.11.2019 թ. Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում՝ 01.01.2020 թ. - 31.12.2020 թ. ընթացքում՝ 800000 դրամի չափով՝ հագուստի ձեռքբերման համար. **«Զիմեգ» ՍՊԸ**, քաղ. Երևան, Անդրանիկի 149/2, ՀՎՀՀ՝ 01848326, պայմանագիր՝ կնքված 22.11.2018 թ. **Բժշկական ծառայություններ/դեղորայքի և հագուստի ձեռքբերում այլ կազմակերպություններից՝ 700000** Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում՝ 01.01.2020 թ. - 31.12.2020 թ. ընթացքում՝ 800000 դրամի չափով՝ ավտոմեքենայի վառելիքի ձեռքբերման համար. **«Ֆլեշ» ՍՊԸ**, քաղ. Երևան, Կողբացու 30, ՀՎՀՀ՝ 01808789, պայմանագիր՝ կնքված 04.11.2019 թ. **Տրանսպորտային ծառայությունների/վառելիքի ձեռքբերում այլ կազմակերպություններից՝ 3200000**
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը կկազմեն 20572000 դրամ կամ ծրագրի ընդհանուր արժողության 16 տոկոսը: Կազմակերպչական ծախսերը ներառում են կապի ծառայությունների (876000 դրամ), հաշվապահական և աուդիտորական ծառայությունների (5456000 դրամ), գրասենյակային պիտույքների (1000000 դրամ), շինության պահպանման և սպասարկման ծախսեր (1500000 դրամ) և վարչական աշխատակազմի աշխատավարձի (11740000 դրամ) համար նախատեսված ծախսերը:
12.	Համագործակցությունը պետական կառավարման և տեղական ինքնակառա-վարման մարմինների, այլ կառույցների ու կազմակերպությունների հետ	ՀՀ ոստիկանություն, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, երեխաների իրավունքների պաշտպանության մարզային բաժիններ, համայնքային խնամակալության հանձնաժողովներ, միջազգային կազմակերպություններ, ՀԿ-ներ և այլն

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունն իրականացվելու է ՀՕՖ-ի Նյու Յորքի և հայաստանյան գրասենյակների, «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի խորհրդի միջոցով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ